

ԵԶԻԴԻ ՔՐԴԵՐ

VI

Մտաւոր մնանկութիւնը, վաղեմի դարերից սկսած, թողել է եզիդիների վերայ իւր ազգուն ներդործութիւնը. կաշկանդել է նրա մէջ յառաջազիմութեան բոլոր բազմակողմանի ձգտումները, նրա միակ ցանկութիւնը՝ կեանքի առօրեայ գոյութեան պահպանողութիւնն է և այն կամքը, որ ստիպում է նրան անպայման հպատակել ճակատազրի հրամաններին առանց քննելու և պարզ գաղափար անդամ կազմելու նրանց մասին:

Այն օրից, երբ Եզիդիի գաղթականութեան հոսանքը հասաւ Արարատեան լայնածաւալ դաշտը, ուր բնութիւնը սքանչելի հրապոյըներով կախարդեց նրա սիրտը, այն օրից, երբ Եզիդին Բարդող լեռների գեղանկար հովիտներում և հիւրասէր Արագածի կրծքի վերայ իւր բնակութիւնը հաստատեց, այդ օրից փոխից նա իւր աւելի մեղմ բնաւորութիւնը, շրջապատուած լինելով կիսավայրենի և իւր կրօնին թշնամի մանմեղական ժողովուրդներով, ստիպուած էր անդադար կոփաներ մղել նրանց դէմ, ընդհարումներ ունենալ, գիմադրել ամբողջ ոյժով հակառակորդի կատաղութիւններին, որով զարգացաւ նրա մէջ ակամայ պատերազմական ոգին, ձիավարժութիւնը, զէնքի գործածութիւնն ու յանդուգն կամքի վստահութիւնը: Չնայելով այդ հանդամանքներին, որոնք ակամայից են զարթել նրա մէջ, այնուամենայնիւ Եզիդին որպէս տգիտութեան ստրուկ, վարչական մարմին կազմելու ոչ մի ընդունակութիւն չէ ցոյց առեւել, թերևս երկար ու ձիգ տարիներից յետոյ, երբ նա կ'ենթարկուի կեանքի արտաքին և ներքին փոփոխութիւնների: Ահաւասիկ այն գլխաւոր և անհիմն կրօնի ազդեցութիւնը, որ ստեղծել է Եզիդի ամբոխի մէջ խաւարամտութեան հիմքը և նպաւտել է նրան տակաւին զուրկ և կաշկանդուած մնալ կրթական միջոցներից և զարգացումից:

Եզիդիները նուիրուած են բացառապէս խաչնարածութեան արհեստին, նրանց կեանքը հովուական է, և այդ ստեղծել են նրանց մէջ կիմայական յարմարութիւնն ու տեղի դրութիւնը:

Բարդող լեռները իրենց բազմաթիւ աղբիւրներով, խոտաէտ և գեղազուարճ հովիտներն իրենց սքանչելի և հետաքրքիր տիսարաններով, ամէն մի ըոպէ պատրաստ են դէպի իրենց զբաւել ճանապարհորդի ուշադրութիւնը, աւելի վառ երևակայութեամբ

յիշեցնել Եղեմը, ուր ամէն ինչ պատրաստ է մարդկային սրտերին ուրախութիւն և հանգստութիւն նուիրելու համար: Ահաւասիկ այդ ցանկալի դրախտումն է անցկացնում Եղիդի քուրդը տարուայ երեք եղանակները, լիոնային թագաւորութեան մէջ է շնչում ազատ կրծքով, այստեղ ջինջ և կապուտակ երկնակամարին մօտիկ սարերի վերայ է ծնւռում Եղիդի մանուկը, նրա որբանը կանաչ մհտաքսանման խոտն է, իսկ վերմակը՝ թարմ և կենսատու օդը: Խաշնարածութիւնը մարմնացել է Եղիդիների մէջ ինչպէս մի սուրբ զործ, նախնի ժամանակից մնացած Սատուծոյ հաճելի մի պարապմունք և արդարներին յատուկ բաժին ու ժառանգութիւն:

Եղիդին ամենայն սիրով և ոյժով տիրապետել է խաշնարածութեան արհեստին, բաւական ընդարձակել է իւր սեպհական ջանքերով այդ ճիւղի մշակութիւնը, առաջնորդուելով կեանքի փորձերից:

Խաշնարածութեան կարդ ու կանոններին հմուտ է, այնպէս որ խաշնարած հովիւը ոչխարի իւրաքանչիւր շարժմանը խորհրդաւոր նշանակութիւն տալով, գուշակում է նրա զրութիւնն ու ցաւը, եղանակի փոփոխութիւնը և պատահական քամիների անկանոն հոսանքը:

VII.

Խաշնարածութիւնը Եղիդի քրդի բնաւորութեան մ, ջ արմատական է: կաթի հետ փոքրիկ մանուկը ընդունում է հովուական կեանքի քաղցր տպաւորութիւնները, իսկ ծնուած օրից, երբ առաջին անգամ աչքերը բաց է անում, իւր շրջապատը միայն ուն ու գառն է տեսնում, որոնց գուրդ մայրը իւր դաւակից աւելի է խնամում, փայփայում, սիրում, համրուրում նրանց անմեղութիւն արտայայտող աչքերը, և այդչափ գուրգուրանքն ու փաղաքանքը ոչ թէ նրա համար, որ նրանցից է ստանում իւր կենսական ապահովութիւնն ու ապրուսող, այլ նրա համար, որ այդ արդարաները Սատուծոյ սիրելի կենդանիներն են, նրանք միամիտ, անվնաս ու անմեղներ են, որոնց համար թիսուս քաղցրութեամբ ընդունեց այրի մէջ ծնուել և հովիւներին երկալ Եղիդին հաւատարիմ է օտարի ծառայութեան մէջ, և ցոյց է տալիս անպայման հնագանգութիւն, անկեղծութիւն և ժրաշանութիւն, որոնք ինչպէս բնորոշ յատկութիւններ Եղիդու ուղղութեան և ոգւոյ մէջ մարմացած սովորութիւններ են համարւում: Եղիդին իւր խոստումն ու ուխտը դրժել չգիտէ, նրա պատասխանն է այս կամ ոչ: Հակառակ դէպքում այդպիսին ամենաթոյլ և արհամարհուած էակն է համարւում ցեղի և ամբողջ ժողովրդի առաջ:

Այդ բոլորովին աղէտ և մտաւորապէս իազառ սահմանափակ տարրը ունի և իւր հոգեկան ասաքինութիւնները, որոնց գործադրութիւնը համարում է ինչպէս արտայայտութիւն բարեսրաւութեան և խզի, առանց գաղափար կազմելու, թէ նրանք կարող էին լինել Քրիստոսական պատուէր կամ հին դարերում քարոզուած Մովսիսական օրէնք, Եղիդիների մէջ ամենամիաս օրէնք է համարում, պարագ տալ ուրիշին, բայց տոկոս չհաշուել, մուրհակ չամներ, այլ զրանց փոխարէն միայն գործազրել ազնիւ խոսառումն Եղիդին հիւրամէր է և հիւրասիրութեան պայմանները անթերի կատարելու համար միև հաջակ է ստացել:

Մարդասիրութիւնը՝ ինչպէս իւրաքանչիւր անհատի հոգոյ և զգացմունքների արտայայտութիւն, գտնուում է մարդկութեան ընդհանուր ճիւղերի մէջ աւելի կամ պակաս գործադրութեամբ, իսկ Եղիդիների մէջ նա սահմանափակ է և վերապահուած է առանձնափէս սուլ իրենց ցեղի համար, օֆնել, աջակցել միմեանց, ապահովել ընկածին նիւթական կերպով, Եթէ բնութեան արհաւերքների և կամ զանազան անյաջողութիւնների պատճառով սնանկանում է որևէ անհատ, զրկուում է իւր միակ ապրուստից՝ ոչխարի հօտերից, այդ ժամանակ հասնում են օգնող ձեռքեր, ծանօթ թէ անծանօթ, իւրաքանչիւր իւր կարողութեան չափ բաժին է տալիս կարօտեալին, որով նա կանգնուում է իւր ընկած զրութիւնից:

Եղիդի ազգաբնակութեան զգացմունքների ամենատխուր և մոայլ կողմէ այն է, որ մարդասիրական զգացումը իւր որոշ սահմանակէտն ունի, բացառապէս իւր ցեղի և արեւակցի համար վերալսահուած, իսկ օտար տարրի և անհատի համար ցոյց տուած նրանց մարդասիրութիւնը զանազան հաճոյքների և շահախնդրական ձգտումների բուռն հետևանք է:

Կհանքի և կեցութեան անհրաժեշտ պայմանները, շրջարարող բնութեան ներգործութիւնը, ամեն կերպ ազդում են ժողովրդի տնտեսական դրութեան, հասարակական բարքերի և զգացմունքների վերայի Խաշնարածութիւնը, որ իւր մեզմ ծաւալով լինային եղանակի և խոտաւէտ հավիտների արգասաւոր ծնունդն է, զարթեցրել է սարերի որդիների, պարզամիտ հոգուր մէջ հոգեկան զգացմունք արտայայտող գլխաւոր ոյժերից մէկը—երաժշտիւնը:

VIII.

Երաժշտութիւնը՝ լեռնական ամբոխի հոգուոյ ընկերն է, որի սահուն ելեջնակի մէջ բնութեան հարազատ դաւակը անցեալի քաղցր տպաւորութիւններն է յիշում, իսկ նրա սուր արձագանք-

ների ազդեցութեան տակ վարկենական արագութեամբ քուրդ Հասօն թռչում է, սլանում դէպ պատերազմի դաշտը, բորբռում է նրանում վրէժինդրութիւնը, նախնի դիւցազունաներն է երևակայում և կրկին մեղմանալով, սրտի անչափ գոհունակութեամբ վերանում է դէպի անմահ բնութիւնը, դէպի կապոյտ երկինքը, և իւր հոգւոյ անչափ շնորհակալիքն է յայտնում նրան։ Հասօն երգում է, նստած կաթնահամ և քրքջուն աղբերական մօտ, նա նայում է ցած դէպի խոր անդունդը, ուր հաղիւ երեւում են արագաթռիչ եղնիկները, նա յառում է իւր սկ ու թանձը ընչացքներով ծածկուած աչքերը դէպի վեր լեռնային սրածայր գագաթները, որոնցից գեռ նոր է խոյս տուել գիշերային մթութիւնը, և ուր առաջին անգամ արեւի ճառագայթներն են ողջունում։ Հասօն երգում է, իսկ Օգմանը եղանակում է հեշտալուր սրնդի վերայ, նրանց առաջ ցրուած են ոչխարն ու այծը, որոնք արածում են ցօղապատ արօտներում ընդարձակ տարածութեան վերայ սրնդի կախարդող տպաւորութեան տակ Այդ պարզամիտ կենդանիները այն աստիճան ընտելացած ու սիրահար են սրնդի գեղգեղանքներին, որ նրան ներդաշնակութեան մէջ գանում են իրենց բաւականութիւնը և եղանակի համաձայն շարժում են դէպի առաջ կամ յետ։

Երաժշտութիւնը, ինչպէս հոգեկան զգացմունք արտայայտող մի արուեստ, ընկերակցում է լեռնականին նրա միայնութեան մէջ, նրա հոգւոյ և ջղերի վերայ տիրապետում է ամբողջ ոյժով, այնպէս որ երգելու ժամանակ այլայլում է նրա դէմքը, դողդողում են նրա սկ ու հաստ շրթունքները, զլխարկը (պէճ) թէք-ռում է դէպի ականջի մի կողմը, զլուխը կիսարաց, աջ ձեռքն ականջի վերայ զրած, բարդում է ճակատի վերայ արիական ակօսները, իսկ նրա զուրս ցցուած աչքերի մէջ նկատում են վրէժինդրութիւն, յանդուգն կամք, բարկութիւն և հոգեկան զանազան զգացմունքներ, նայելով թէ երգի բովանդակութիւնը, իմաստը ինչ գործողութեան կամ դէպքի վերաբերութեամբ է։

Քրդական երգերը կապուած են նրանց կեանքի հետ, նրանք երգում են սրտի և հոգւոյ զգացմունքով, իւրաքանչիւր երգիչ և երգում է պահպանում է եղանակի կանոնաւոր ճայնառութիւնը։

Քրդական երգերը ընդհանրապէս ժողովրդական են և երեք կարգի բաժանուած։ Առաջին և երկրորդ կարգի երգերն անցեալ հին ժամանակներին են վերաբերում, որոնք բովանդակում են վառ մտքեր, և ստեղծագործութիւններ նուիրուած դիւցազանց գերազոյն արիութեան և ժամանակակից հերոսների քաջագործութեանց։ իսկ երրորդ կարգի երգերն արտափայլում են լեռնականի ներկայ վիճակն ու դրութիւնը, նրա սիրային աշխարհի հետ ու նեցած հակումները, նրա բնաւորութիւնն ու կեանքը իրենց բոլոր

տխուր և ուրախ պատկերներով:

Սրտաբուղիս և եռանդալից երգերի մէջ Հասօն չի մոռանում իւր նախնեաց հերոսական փառքերը գովարանել, անմահացնել նրանց դէպի հեռուն, դէպի բազմաստուածութեան աշխարհը, ուր Արամազդն է զերագահում, ուր Շամոը (արի) իւր բոլոր կհնսատու ոյժերով շնորհում է համայն երկնային բնութեանը առատութիւն, բուսական և կենդանական առարկաներին աճեցողութիւն և կեանք: Քուրդը պատերազմ է գնում և երգում է հետևեալը, որ մէջ ենք բերում թարգմանաբար.

1. Մէգ և մառախուղ լեռները պատել,

Սև սկ ամպերը շանթել արձակում,

Սարերի գլխին թշնամին կանգնել,

Անհամբեր սրտով մեղ է սպասում:

2. Նա չէ կշտացել անթիւ գոհերով

Իմ եղբայրների, անմեղ քոյրերի,

Այդ նախատինքը սրբել արիւնով

Այս է նպատակ իմ միակ սրտի:

3. Թոռիր, իմ նժոյգ, թոռիր, սլացիր

Այնտեղ, ուր քաջաց արիւն է կանչում,

Հովիտներ, ձորեր, շուտով դու անցիր,

Հասիր, իմ նժոյգ, անվախ, անտրտում:

4. Թող այնտեղ քաջից ես մեռնեմ սրով,

Թող տաք գնտակը անցնի իմ կրծքից.

Ես կենդանի եմ յաւիտեան հոգով,

Երբ չար թշնամուն զրկեմ ես կեանքից:

5. Ահա իմ կտակն, սևաթոյը նժոյգ,

Քեզ եմ աւանդում, դու լաւ պահպանիր,

Երբ ես քեզ կը տամ իմ վերջին բարե,

Տուն հասիր շուտով, ու այսպէս խօսիր:

1X.

Քուրդը մեռնում է. Նրա թաղման հանդէսը կատարում են սովորականի համեմատ, հասարակ կերպով, կրօնական մասը շատ թոյլ է և համարեա ոչինչ չկայ, բացի մի երկու կարճ և անգիր՝ ալօթքից, որ լուելեայն մըմնջում է նէյխը գերեզմանի վերայ: Իսկ հանգուցեալի մայրը, իւր ազգական և բարեկամ կանաց հետ շրջապատած ննջեցեալի գերեզմանը տխուր և բարձր ձայնով երգում է, թւում է մի առ մի իւր որդու գործերը, նրա բնաւորու-

թիւնը, նրա առանձնակի յատկութիւնները և նրա կեանքի ախուք և ուրախ կողմերը երգում են կանայք յաջորդաբար և մէկը միւս սին ձայնակցելով, իւրաքանչիւրը իւր զգացումն է արտայայտում իւր սեպհական, ինքնուրոյն ստեղծագործութիւններով։ Ահա մի պատկեր քրդական սովորութիւնների մէջ, որ յիշեցնում է մեղ նահապետական դարերի սգացող և ողբասաց լալկաններին։

Մեծ նախատինք է քրդունոյ համար, եթէ նա չէ երգում իւր ամուսնոյ մահը, չէ ողբում նրա անդառնալի կորուստը և չէ յօրինում նրա բնաւորութեան յատուկ՝ առանձին մի երգ։ Նա երգում է մելամաղձոտ տպաւորութեան տակ, նրա ձայնը նուրբ է և թրթրուն, որի ալիքանման տատանուող ելեէջների մէջ նրա սիրտն ու հոգին՝ իւր ամբողջ կարողութիւնով կարելի է նկատել։ Խոկ դէմքի ամենաթեթև շարժումը, երկնագոյն աչքերի վարկենական բաց-խփիկ նայուածքը նրա դէմքի վերայ արտացոլում են գեղեցկութեան չքնաղ տիպարը։ Նա երգում է.

1. Դու լո՛ռւմ ես, սարի որդի,

Սև հողի տակ միայնակ,

Շուտ մուացար անհուր եթեր,

Պարզ աղբիւրներ սառնորակի,

2. Կուռօներդ անհայր թողիր,

Խեղճ, անտէրունջ գառնուկներ,

Ես պիտ կրեմ ամէն զրկանք,

Թող կուրանան իմ աչեր։

3. Աէր, փայփայանք շուտով մուցար՝

Զերմ համբոյբներ ամուսնուդ,

Ցուրտ գերեզման շուտ զրկեցիր,

Թողիր կարօտ սիրուհուզ։

Սրանով միայն չէ բաւականանում եզիդի քրդունին, նա յիշ շում է իւր ամուսնոյ կեանքի այն գծերից, որոնք պարունակում են քաջագործութիւններ թշնամի ախոյեանների դէմ, անվեհեր սիրտ լեռնային գաղաններին դիմաղրելու, և այն ամէն փառաւոր յատկութիւնները, որոնք բացառիկ հերոսների հոգւոյ առանձնակի յատկութիւններն են կազմում։

Աշէն, լեռնային այդ անմեղ ոգին, ողբում է իւր աղագայ բաղդը, ճակատագրի պատրաստած սկ օրերը սրտի անվերջ մըրս մունջներով, փարում է գերեզմանի շուրջը դառն կակիծներով և երկու այտերը սառը հողին քսելով իւր այրուած սրտի կարօտն ու հոգւոյ անհուն բաւականանութիւնն է առանցում։ Աշէն, չոքած անշունչ գերեզմանի առաջ, խոստովանում է իւր սխալանքը, եթէ

իրը և իցէ մեզանչել է ամուսնական պարտականութեանց դէմ, իրը անհամեստ և անհնաղանդ վարժունքով վիշտ և ցաւ է պատճառել նրան, խոստանում է ցիեանս հաւատարիմ մնալ, ուխտում է չկորցնել նրա յիշատակը և այնուհետև համբուրելով նրա գերեղմանը, տալիս է իրը վերջին հրաժեշտը և յուղարկաւորում է դէպի յաւիտենականութիւն:

X.

Հարսանեաց հանգէստերը Եզիդիների մէջ աւելի պարզ կերպով են կատարում քան թէ մեր հայ գիւղական ամբոխի մէջ. հրաւիրեալները լինում են ամենամօտ ծանօթներն ու բարեկամները, որոնք մասնակցում են հարսանեաց ուրախութեանը իրենց առատ պարզեներով ու նուէրներով:

Առանձնապէս կամ զոյգ զոյգ պարելու սովորութիւն չկայ թէ արական և թէ իգական սեռի մէջ. նրանց խաղը օղածե մի շրջան է, որ կոչւում է կոր պար (գիօվընդ): Այստեղ քրդուհին իւր կատարեալ զարդարանքով է յառաջ զալիս, նրա երկար պարանոցը ծածկուած է թանկագին մանեակով, որին շրջապատում է փայլուն սև և գեղին սաթերի շարուածքը, ճակատի վերի մասը՝ ամբողջ երկարութեամբ շարուած են սոկեայ կամ արծաթեայ կիսալուսնածե զբաներ, որոնցից կախուած են սոկեայ նուրբ շղթաները երկու կողմից մինչև ականջները: Քթի արտաքին մասի վերայ դրուած է սոկեայ գինթ, (խըզըմ, զարաֆիլ, թանայ) կապոյտ փիրուայով, իսկ ճակատի մէջ տեղը, արհեստական կերպով հնարուած, նախշած գունաւոր պիսակներ, որոնք հեթանոսական դարու աստուածուներներն են յիշեցնում, աւելի գեղեցկութիւն են տակիս զէմքի գծագրութեանը:

Իւրաքանչիւր քրդուհի՝ եթէ ոչ երկու, զոնէ ձեռքի մէկ դաստակը պէտք է կապած ունենայ ուլունքներ և ապարանջան նոյն իսկ հասարակ մետաղից: Երկար բաճկոնակի վերայից հագնում են թանկագին թելերից ասեղնագործած պարեզօտ երկնային զանազան լուսաւոր մարմինների ձևակերպութեամբ: Զեռքի մատները գոյնզղզոյն ակներով մատանիներ շարուած: ոլոգները նոյնպէս ուլունքներ կապած:

Ցղամարդկանց տարազը նոյն է ինչ որ մահմեղական քրդերինը, տղամարդկանց մէջ քաջը նա է համարւում, ով թիկունքի ու երկու բազուկների վերայ կարած ունի Շէյխից կամ Մոլլայից օրհնուած և գրուած թալիսմաններ (աղօթից թղթեր), որոնք իրենց հրաշալի զօրութեամբ պահպանում են թշնամւոյ սրից ու գնդակից կոռուող հերոսին:

Հարուսատները դիմարկների վերայ փաթաթում են նուրբ մետաքսից գործուած թաշկինակներ փայլուն և գունաւոր ուղղունքներով զարգարած, ձախ կողդից կախուած են կեռ դաշոյն և վահան, որոնցով պաշտպանւումէ թշնամիներից:

Եղիդի և Մահմեդական քրդուհիները զանազանւում են միւմեանցից արտաքին հետևեալ նշանով, մահմեդական քրդուհին պարտաւորուած հազնուում է կարմիր գոյնով կտորից վարտիկ, իսկ եղիդի քրդուհին սպիտակ կտորից, որը մաքրութեան և արդարութեան նշան է:

Կլոր կոչուած պարերը կատարւում են ընդհանրապէս շատ ծանր և տիսուր եղանակներով. իսկ պարերգները, որոնք առանց փողի են լինում և կոչում են թըռոցքի, երգում են տղամարդիկ և օրիորդներ, փոխ առ փոխ, որի ժամանակ յառաջանում են մրցութեր պարզ բանահիւսութեամբ և շատ անգամ այնպիսի ստեղծագործութիւններ, որոնք արտայայտւում են կծու և դիմառնական նախաղասութիւններով: Այդպիսի ըովանդակութեամբ երգուած պարերգները ըստ մեծի մասին թեթև են և շարժիչ, տմափոփուած սիրային զգացմունքներով: Քրդերը պարում են և «պարկպըզուկ» կոչուած գործիքի եղանակով, որը պատրաստուածէ ամբողջապէս կաշուից և մի մատնաչափ եղէզից, որի վերայ նշանակուած են ձայնահան ծակեր. երբ պարկը լըցւում է ամբողջապէս օդով, ուռչում է և ընդունում է ստամոքսի ձեւ:

Հարսանեաց հանդէսների ժամանակ, որպէս զուարճութիւն, մեծ տեղ են ըստում ձիարշաւն ու մականախաղը, ուր ասպարէզ է գալիս խրոխտապանծ երիտասարդը, արծաթեայ դրամներով և շղթաներով զարգարուած ձիով յառաջ է անցնում, շարժում է տէզը, ձգում և բռնում, իւր ախոյեանն է փնտուում: Իսկ միւս կողմում միմեանց հակառակ մարտակիցները սրով ու վահանով, մեծ ճարպիկութեամբ վեր ու վայր թռչում, իրարու ոյժը խորամանկութեամբ չափում, չափչը գումարուած գիտին տապալել, յաղթել են ուղում: Այս ուրախասութ տապարութիւնների տակ հանդիսատեսները չեն զլանում մէկ մէկ բաժակ զինիով հարսն ու փեսայի կենացը մաղթել: Հարսանեաց երրորդ օրը լրանում է, իւրաքանչիւր հրաւիրեալ իւր բերած ընծան կամ նուէրը հարսին ու փեսային տալով հեռանում է մեծ շնորհակալութեամբ քաղցը և ուրախ աղդեցութեան տակ:

XI.

Զանաղան հասարակութեան և զանազան ժողովրդի մէջ արտաքին աշխատութիւնն ու պարապմունքը աւելի պարզ կերպով

են բնորոշում նրա անտեսական դրութիւնը և նրա ապրուստի առօրեայ վիճակը:

Եղիդի ժողովուրդը իւր կղզիացած կեանքով չունի առնչութիւն ոչ մի աշխարհի և ոչ մի տարրի հետ, նրա միակ փրկութիւնը հոգեոր աշխարհում դիւական մոլորութիւնն է, իսկ երկրաւոր կեանքում՝ խաչնարածութիւնը: Եղիդին չունենալով արտաքին յարաքերութիւն օտարների հետ, անձանոթ հն նրան առևտրականութիւնը, արհեստն ու գիտութիւնը, նոյնիսկ կեանքը իւր բաղմակողմանի պայմաններով: Նրա սրաի ուրախութիւնը և յուսոյ միակ յենարանը հովուական կեանքն է:

Ահաւասիկ մի պարապմունք, որով ապրում է լեռնական քուրզը և ապրեցնում է իւր հետ ամրոջ ընտանիք: Քուրդ տղամարդը իւր արտաքին սահմանափակ աշխատութիւններն ունի, մի քանի եզներով կարաւան գնալ, տան համար հարկաւոր եղած ծանրութիւնները զբաց ներս բերել, ջրազաց գնալ ալիւր բերելու համար, ցերեկները ոչխարներ արածեցնել, իսկ գիշերները նրանց պահպանութիւնն վերայ հսկել, ահա տան ամենածանր աշխատութիւնները, որ կրում է իւր ուսերի վերայ քուրդ տղամարդը:

Աւազակութիւնն ու գողութիւնը քրդի բնաւորութեան յատականին է համարում, շատ ամօթ և նախատինք է այն անհատի համար, որ գողանալ չզիտէ, այդպիսին մեղանչում է Եղիդիների կրօնական օրինաց և սրբութեան առաջ, այդպիսին կին առնելու իրաւունք չունի, որպէսհետեւ նա՝ ով գողութիւն անել չզիտէ, կին պահելու կարողութիւն ևս չի ունենայ և ոչ իսկ աշիր¹⁾ կոչուելու արժանաւորութիւն:

Եղիդին, գողութիւնը՝ որպէս արդարութիւն ընդունելով, բացատրում է հետեւալ կերպով. «Երբ հրէաները խաչում էին Յիսուսին, եղիդի կրօնաւորներից մէկը զողացաւ Յիսուսի աջ ձեռքի զամերը և պահեց իւր մօրուքի խիտ մազերի մէջ, աղատելով խաչուողին տանջանքից»: Այդ հիման վերայ եղիդին պարտաւորուած պէտք է և զողանալ զիտենայ և մօրուք ունենայ: Եղիդին կողուպտել զիտէ, իսկ սպանել հաղուազիւտ գէպքերում կպատահի:

Տնային տնտեսական վիճակի բարւոքումը ամբողջովին կանաց լուրջ հսկողութեան և խնամքին է ենթարկում, այստեղ տղամարդի լիազօրութիւնը իսպառ կորչում է, ասպարէզ է զալիս աշխատաւոր տնտեսուհին իւր եռանգուն բնաւորութեամբ, զառն ու մաքին, կովերն ու այծերն ամէն կերպ իրենց հնազանդու-

1) Քաջ, դիւցազն:

թիւնն են ցոյց տալիս նրան, ճանաչում են նրա քաղցր ձայնը, սիրալիր և անմեղ աշբերով արտայայտում են իրանց սէրն ու պատրաստականութիւնը դէպի նա, կթել մածուն, իւղ պանիր պատրաստել և գոհանալ նրանցով:

Առաւոտեան գեռ ևս քաղցրիկ արևը հորիզոնի վերայ չը-
րարձրացած, գեռ փայլիլուն լուսաբերը իւր կրակոս բոցերով
ջինջ երկնակամարի վերայ չերեցած, ժրաշան անտեսուհին (կա-
վանի) շուտով վեր է կենում, կարմիր գոգնոցն առջեր կապած,
նախօրուանից պատրաստած մածունը հարում է, մեծ կաթսանե-
րով կաթ է տաքացնում, արթնացնում է տան միւս անդամներին,
իւրաքանչիւրը իւր սեպհական գործն է սկսում, առանց մէկը
միւսի պարապմունքին միջամտելու:

Աշխատութիւնը իւր բոլոր գժուարութիւնով մխիթարում է
կառավարիչ անտեսուեն, յոզնածութիւն, չարչարանք նեղու-
թիւն, ամէն ինչ հեռանում, չքանում են նրա սրտից, երբ իւր
պարտականութիւնները անթերի կատարում է, երբ իւր անային
աշխատութիւնները կանոնաւոր կերպով են յառաջ գնում: Խաղալը
բուրդ է զգում երկաթէ սանդերքի վերայ, Զահնէն մաքրում է նրանց
և բրդի շերտերը առանձին միմեանց վերայ է դարսում, իսկ Աշէն,
որ իւր քոյրերի մէջ ամենից մեծն է, բրդից թելեր է մանում և
ամէնքը միասին գործում են զանազան ձևերի կապերտներ, փա-
լասներ, թեռ, պարս, քէչայ, գորգ, ծածկոցներ և պաճիններ: Այդ
ձեռագործները կանայք վաճառում են դրամով կամ փոխանակում
են զանազան մթերքների և իրերի հետ:

Իսկ ուր է և ինչ է անում Հասօն աշխատանքի այդ քաղցր
ժամանակին, նա այդ օրը չէր երեսում և հետաքրքրուում, ամէնքը
սար և անտարբերութեամբ իրանց գործովն էին զրազուած, բայց
ահա Հասօն գալիս է, գիշերային պահապան գամփոնիրը զիմա-
ւորեցին նրան, նա տիսուր է, մտաւ վրանը, զէնքերը վրանի սիւ-
նից կախ տալուց յետոյ, պարկեց քնելու առանց ուշադրութիւն
դարձնելու կամ խօսելու որ և իցէ մէկի հետ Խեղճ մարդ, նկա-
տելով տանտիկինը որդւոյ հոգեկան անհանգիստ դրութիւնը,
շարժում է գլուխը ասելով՝ «Է՞ն, որդի, Աստուած ամէն ժամա-
նակ մարդի գործը չի յաջողի»:

Տանտիկինը ծանօթ լինելով իւր որդւոյ բնաւորութեան,
նրանում արմատացած սովորութիւններին, որոնք այլ ևս կարո-
տութիւն չունէին ոչ խրատական և ոչ ուղղիչ խօսքերի, կարեկ-
ցելով ցաւ էր յայտնում իւր որդի Հասօնի օր ու գիշեր չարաչար
աշխատութեան և ձեռնունայն տուն վերադառնալու համար: Հա-
սօն զնացել էր գողանալու:

XII.

Բազմակնութիւնը ինչպէս հեթանոսական դարերից մնացած օրէնք, Եղիղի ցեղի մէջ տակաւին պահպանել է իւր գոյութիւնը, նա պարտադիր չէ, և իւրաքանչիւր անհատ աղատ կարող է հետեւել այդ սովորութեանը, իթէ ներում են նրա նիւթական հանգամանքները, այնպէս որ հարիւրից երեք հոգի հազիւ (բացառապէս ըէցեր) ունեն երկու կամ երեք կին, այս ևս ոչ ինչպէս օրինական, այլ որպէս հարճ կամ աղախին օրինաւոր կնոջ:

Տնտեսական աշխատութիւնների մէջ բացառապէս հսկում է օրինական կինը, տան բոլոր անդամները ենթարկեում են նրա իրաւունքներին, առանց նրա խորհրդի և կամքի հաճութեան ոչ ոք համարձակութիւն չըւնենայ որ և իցէ կարգադրութիւններ անել:

Եղիղիների մէջ ամուսնութիւնը մերձաւոր ազգականների հետ նոյն է, ինչ որ Մահմեդականների մէջ: Ամուսնական օրէնքը կատարում է ամենաթեթև կերպով: Շէյխին նիրկայանում են փեսան և իւր քաւորը, իսկ աղջկայ կողմից՝ փոքր ինչ հեղինակաւոր և վատահնիլի մի անձնաւորութիւն, ինչպէս երաշխաւոր:

Շէյխը հարցնում է աւանձնապէս, թէ «արդեօք, նրանք սիրմաւմ են միմնանց իրենց յօժար կամքով, խոստանում են մինչև վերջ փոխադարձարար միմեանց հաւատարիմ մնալ»: Այդ հարցերին դրականապէս պատասխան ստանալուց յետոյ, օրհնում է նրանց միութիւնը և արձակում էր Այդ օրից սկսած աղջկայ երաշխաւորը հսկում է երկու ամուսինների վերայ, որպէսզի նրանց մէջ չպատահի որ և իցէ գժտութիւն կամ գժոգութիւն միմեանց դէմ, երաշխաւորը ոչ թէ միայն աշխաւում է հաւասարակշռութիւն պահպանել նրանց մէջ՝ նպաստելով նրանց բարոյական կոչմանը, այլ և նիւթապէս օգնում է, աշխատելով բարեզել նրանց դրութիւնը, որովհետև ամուսնացեալ դոյզերի ամենաչնչին պակասութիւնը, նոյն իսկ չըաւորութիւնը երաշխաւորին է վերաբերում: Հակառակ դէպքում երաշխաւորը ամենասատոր համարումն կունենայ ամբողջ ցեղի և իւրաքանչիւր անհատի առաջ:

Իսկ եթէ շատերին չէ յաջորդում ամուսնանալ իւր ընտրածի հետ աղքատութեան կամ չըաւորութեան պատճառով, այդպիսի նեղ հանգամանքում երիտասարդը առեանգում է աղջկան, փախցնում է նրան և տանում է ցեղապկանի կամ Շէյխի տունը, ուր աղջիկը մնում է այնքան ժամանակ, մինչև որ երիտասարդը իւր սեպհական աշխատանքով վճարում է աղջկայ հօր հասանելիք պարտքը: Այդ սովորութիւնը հինոօրեայ ժամանակներից մեզանում

ևս տակաւին գոյութիւն ունի, որը կոչւում է «զալան», բաշ-
Ալդ» զանազան անուներով զանազան տեղերում։ Նորահարս
քրդուհին իւր քաւորի հետ չխօսկան է, որպէս մհծարանք և յար-
գանց նշան, միենոյն սովորութիւնը մեր զաւառական ժողովրդի
մէջ իւր խիստ և պատուաւոր տեղն է բռնում, քաւորին երևալը
և նրա հետ խօսալը յանցանք և մեղք է համարում։

XIII.

Այսպիսի պայմանների մէջ ծնուռղ և սնուռղ մի տարր,
զուրկ մտաւոր զարգացումից, զուրկ ինքնաճանաչութեան ոգուց,
որը կուրօքն միայն հաւատում է բաղդի և ճակատագրին, ան-
տարբեր է ննում և չէ կամենում քննել և հասկանալ իւր կեանքի
երեսյթները, հետեւապէս այդպիսի ժողովուրդը, վարչական մար-
մին կազմելու ոյժ չունենալով հանդերձ, ընդունակ չէ և չէ էլ կա-
րող յարմարուել կանոնաւոր օրէնսդրութեան պայմաններին, ո-
րոնք աւելի նպաստում են մտաւոր զարգացման և լուսաւորու-
թեան. այլ սնազաշտութեան և նախապաշարմունքի մէջ ընկըդ-
մուած ամէն կերպով նուրիբուած և հպատակ ևն կրօնապետի և
ցեղագետի իրաւանց և հրամաններին, որոնք համարում են
եղիդիների համար վարչական և կրօնական մարմիններ և որոնք
ինչպէս ժողովրդի խնամակալներ, տարածում են ժողովրդի ամէն
խաւերի մէջ իրենց լիազօր ինքնիշխանութիւնը և աղղեցու-
թիւնը։

Չնայելով որ տեղի դրութիւնը և կլիմայական յաջող պայ-
մանները մեծապէս ազդեցութիւն ունեն ժողովրդի զարգացման,
պարապմունքի, արհեստների ծաղկելու վրայ, այնուամենայնիւ ժո-
ղովուրդը չէ կարողանում նպատակի հասնել և անդորրութիւն վայ-
ելիւ, եթէ նրա խաղաղ կեանքը վրդովում և խանգարում են ար-
տաքին հանգամանքները, թշնամի ցեղերի բարբարոսութիւնները,
որոնց պատճառով աշխատող տարրը երեսի վերայ թողնելով իւր
արդիւնաւոր գործը, իւր պարապմունքը, ստիպւում է ակամայ
կոռուել թշնամիների հետ, զիմապրել նրանց յարձակումներին և
արշաւանքներին, որով զարգանում է ժողովրդի նոյն իսկ ամենա-
խաղաղ դասակարգի մէջ պատերազմական ոգին, զէնքի գոր-
ծածութիւնը, վստահութիւն, յանդքնութիւն, և այդ բոլորը՝ իւր
գոյութիւնը պահպանելու համար միայն։

Եղիդիների բազմաժամանակեայ կեանքի փորձերը հաստա-
տապէս ցոյց տուին նրանց ազգայնական ոգւոյ անշարժութիւնը
և նրանց խաղաղ բնաւորութիւնը, այնպէս որ Եղիդին իւր սեպ-
հական և իրեն յատուկ յատկութիւններով ոչ մի համեմատական

կշռի մէջ չէ կարող մտնել իւր դրացի և շրջապատող ազգարնաշ կութիւնների հետ։ Դարերի ընթացքում թշնամիներից անվերջ հալածուած եղիզը այլ ևս չկարողացաւ տանել անընդհատ շարունակուող նեղութիւններն ու ճնշումները, թողեց Միջագետքի սահմանները և գաղթականութեան մեծ հոսանքով դիմեց Պարսկաստան, Փոքր Ասիայի զանազան կողմերում, Արարատեան գաշտավայրում և նրա բարձունքների վերայ ընակութիւն հաստատեցր

Այդ իսկ ժամանակից նույնիոյ մեծ Պետութեան երեքգունեան դրօշակի տակ մեծ արտօնութիւն և ազատութիւն էին վայելում Եղիզինները որպէս հաւատարիմ հպատակ և ժողովուրդ, ժողովրդական զատեր, պատժական օրէնքների գործադրութիւնը, կեանքրի և կենցաղավարական զանազան թեթի և ծանր ինդիրների վճիռն ու լուծումը ծերակոյտի ժողովի խորհրդից կախումն ունէին։ Տանուտէրներ և գեղաւագներ (րոլօվա) ընտրում էր ինքը ժողովուրդը ցեղապետի առաջնորդութեամբ։ Ցեղապետը որպէս պատասխանատու անձնաւորութիւն կառավարութեան դէմ, ժողովը վըրդի բոլոր գործերում միջամտում էր, կարգադրում էր ամէն ինչ իւր ցանկութեան համաձայն, իւրաքանչիւր նշանակեալ ժամանակին ժողովրդից պահանջելիք հարկը կառավարութեան յանձնելով։ Բայց Եղիզինների ազատութիւնը և համայնական ոյժերով կառավարուող զօրութիւնը երկար չտևեց, նա շուտով գագարեց, երբ վերայ հասաւ եօթանասուն և եօթ թուի Ռուս-Թրքական պատերազմը, որով ամէն ինչ կերպարանափոխուեց և ենթարկուեց կառավարչական օրէնստրութեան։

Եղիզին իւր անցեալը երազել կարող էր այնուհետեւ, մեղմացաւ նրա կոպիտ և յանդուգն ընաւորութիւնը, հանգամանքները իսպառ փոխեցին նրա առանց այն էլ անտեսական աննախանձելի դրութիւնը։ Այն քրդուհին, որ իւր որդուն պատերազմի երգերի ազդեցութեան տակ էր օրօրում, նոյն մայրը այժմ բարի և աշխատասիրութեան մհեղեղիններով է քնացնում, այն արիւնառուշտ երիտասարդը, որ զողութեան և աւաղակութեան անձնուէր հերոսն էր համարւում, այժմ հանդարատարարոյ և ազնիւ անձնաւորութիւն է համարւում։

XIV.

Տարօրինակ երևոյթ, այն ժողովուրդը, որ խաշնարածութիւնը ինչպէս սրբութիւն և անմեղութիւն համարելով հետևել է Արէլի և Արքահամի սովորութեան, պահպանել է նրանով իւր կենսական գոյութիւնը։ Նա, որ ատել էր Կայէնին և նրա պարապմունքը, այժմ բնութիւնը ուրիշ կերպ է անօրինել նրա կեանքի վիճակն

ու կառավարչութեան ձեզ, Եղիդին ակամայ պիտի հնքարկուի ժամանակի իշխող ազգեցութեանը, պիտի աշխատէ, գործ պիտի ունենայ երկրի հետ, մոռանալով իւր անցեալի ափուր պատկերները, Քուրդ Մհէն, որ վրանի առաջ ազատ և անհոգ շշապատուած կուօներով իւր քաջագործութիւնների մասին էր երգում սրնդի յուզիչ ձայնով, նա որ կեռ սուրն ու հրացանը վրանի սիւնից կախած՝ որպէս իւր կեանքի ընկերներ միշտ մաքրում, սըրբում էր, նոյն այդ Մհէն այժմ իւր վաճառւնամեայ հասակում երգերի փոխարէն հողագործի «առաւելին» է կրկնում, հրացայտ զէնքի փոխարէն գութանի մաճն է բանել, հերկում է Բարդող լեռների արգաւանդ հովիտները, որըում է ճակատի քրտինքը և հետեւեալ խօսքերն է ասում. «Ճշմարիտ է որ մարդ հողից է ստեղծուել հողից էլ կ'ստանայ իւր բաժինը»:

Եղիդի ժողովուրդը սկզբից մինչև հիմա ամենամօտ յարաբերութիւն և կապ է պահպանել հայերի հետ, ուստում է հայի հաց, խմում է գինի և օղի, յարգում է հայերի սրբութիւնները ու աղօթատկինները առանց կրօնական խտրութեան, իւր բոլոր արտաքին գործերը հայերի հետ է սկսում, ցոյց տալով վերին աստիճանի հաւատաբմութիւն և անկեղծ սէրտ.

Թէ ինչ աստիճանի յարգանք և համակրութիւն է տածում եղիդին դէպի հայերը, այդ ցոյց է առաջի իւրաքանչիւր տարուայ եղիդի կրօնափոխների ստատիստիկան, որոնք ոչ մի օտար ցեղի կամ ժողովրդի հետ կապ չունեն, բացի հայերից:

Եղիդին հայերի հետ կրօնի վերաբերութեամբ խօսելու ժամանակ կրկնում է հետեալ խօսքերը,

«Օրթա մա, օրթա վա
մու հայա»:

Մեր մէջ և ձեր մէջ
մի մազ կայ միայն»

XV.

Եղիդիների բարբառը աղաւաղումն է մարս և Արաբական լեզուների, նա չունի գիր և ոչ գրականութիւն, թէպէտ վերջին ժամանակներում Պ. պրօֆեսոր Սոլոմոն Եղիազարեանցը յարմարացրեց լատինական տառերով արտայայտել Եղիդիների հնչիւնները ու բառերը, բայց նրանք մնացել են անգործադրիկի տակաւին:

Արաբատեան դաշտում ապրող Եղիդիները երախտապարտ են գէպի իրենց ցեղապեաները, որոնք ամեն ինչ զոհում էին ժողովրդի բարօրութեան համար Ցեղապետութիւնը՝ ինչպէս ժառանգական իշխանութիւն, աւանդում էր որդէ ցորդի, որոնք պիտի կառավարուէին նոյն ուղղութեամբ և նախագծով, ինչպէս արւում էր նրանց:

Ցեղապետները իրենց առանձին այրումիով օգնում էին կառավարութեան պատերազմների ժամանակի թէմուր աղան իշխանութիւնը յանձնելով իւր որդի Հասան աղային, նրա հետ միասին տուել է կատարեալ հայրական իրաւունք ժողովրդի կառավարութեան համար Հասան աղան օժտուած էր բնութեան ամենագեղեցիկ յատկութիւններով, բարութիւնը նրա հոգեոյ զլիսաւոր առարինութիւնն էր կազմում, որով վայելում էր ընդհանուրի յարգանքն ու սէրը, նա հոչակուած էր իւր ազնիւ բնաւորութեամբ թէ երեանեան նահանգում և թէ հեռու տեղերում, Հասան աղան իւր կազմ և պատրաստ զօրքերով մասնակցեց հօթանասուն եօթթուի Ռուս-Թրքական պատերազմին և վարձատրուեց շքանշանով ու սպայի պաշտօնով:

Հասան աղան շատ հայտսէր էր, նա առաջինը եղաւ ամրող եղիդի ժողովրդի մէջ, որ ոտնատակ տուեց մնապաշտութիւնը և կրօնաւորների քարոզութեան հակառակ, իւր որդի Ռւսուսին Ա. Եջմիածնի ձեմարանն ուղարկեց սովորելու, ուր աւարտեց ձեմարանի չորրորդ դասընթացը և հեռացաւ հիւանդութեան պատճառով, իսկ այժմ Հասան աղայի անժամանակ մահից յետոյ Ռւսուսն է վարում ցեղապետութեան պաշտօնութիւնը:

Արգեճք ժամանակը չէ այդպիսի մի բուռն ժողովրդի մտաւոր կրթութեան վերայ ուշադրութիւն դարձնել, ժամանակը չէ, մտածել նրա լուսաւորութեան վերայ սթափիցնել նրան տգիտութեան դարաւոր քնից և ոչնչացնել նրա հոգեոյ և սրտի մէջ արմատացած մոլար խարէութեան և մնապաշտութեան գաղափարները, Յոյսերի այդ իրագործութիւնը ժամանակի ամենախիստ ոլահանջն է:*)

† Մկրտիչ բան. Զաքարեանց.

1904 թ. 1 մարտի:

Իգիկը



*.) Սոյն յօդուածի սկիզբը տեսնել նախորդ հոկտեմբերի համարում: